

2432

Ի Ն Չ ՈՒ Ւ

Ա.ԻԵԼԻ ԿԱՆՈՒԽ ԶՏԵՍԱՆ



«Ճշմարտութիւնը փնտու  
քանկազին հանճի մը պէս:»

ՄԵԶԱՅԱ-ԱՅԻՆ ՏԵՏՐԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ի ՀԱ ՄՊՈՒՐԿ

ՄԱՍՆԱՑԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

Մուլտֆեան Խան, Թիւ 11

ԶԱԴՄԱԳԱԾԱԱՐ ԵԶԳՈՒՏՅ, Կ. ՊՈԼԻՆ

1910

203.6

Ի-61

203.6  
հ-61

# ԻԱՀՈՒ ԱԼԵԼԻ Կանուխ Չտեսան

1007  
31860

«Ճշմարտութիւնը փնտու  
թանկագին հանքի մը պէս :»

ՄԻԶԱԶԴԱՅԻՆ ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ի Հ Ա Մ Պ Ո Ւ Ր Կ

ՄԱՍՆԱՑԻՒՇ ԱՐԵԿԵԼԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

Մուլատեան Խան, Թիւ 11

ԶԱԴՄԱԳԺԸՆԱՐ ԵԶԳՈՒՇԸ, Կ. ՊՈԼԻՍ

1910



# ԻՆՉՈ՞Ւ ԱԻԵԼԻ ԿԱՆՈՒԽ ԶՏԵՍԱՆ

-♦♦♦♦♦♦♦♦♦-

«Մերէ զանոնի բու նշմարտուիիւ-  
նովիդ, բու խօսեդ նշմարտուիիւն է:»  
Յաջ. Ժէ. 17:

Երբոր մենք Աստուծոյ խօսքին ապացոյցներովը ցու-  
ցընենք թէ Տէրոջը օրը Շաբաթն է, և թէ մենք անիկա  
պահելու ենք, Մէկաբթի օրը պահողներ կ'ըսեն, «Ու-  
րեմն, այսչափ մարդիկ այսչափ դարերէ ի վեր սիսալա՞ծ  
են: Ինչո՞ւ համար ասիկա աւելի կանուխ տեսնողներ  
չեղան: Միթէ մեր բարեպաշտ հայրերը Մէկաբթի օրը  
պահելնուն համար կորսուեցա՞ն: Ասիկա ճշմարդիտ չկրնար  
ըլլալ: Վասն զի՞ եթէ ճշմարտութիւն եղած ըլլար, մեր  
հայրերը զամփկա անշուշտ պիտի տեսնէին:» Այս առար-  
կութիւնը անհիմն է, քանզի

(ա) Աստուծոյ խօսքը շատ ընդարձակ և խորունկ  
է: Մարդոց միտքը և գործերը անոր սահման չեն կրնար  
ըլլալ: Մեր պարտաւորութիւնները մեզի Սուրբ Գիրքը  
կը սորվեցնէ, ոչ թէ մարդոց գործերը:

(բ) Այս առարկութիւնը միշտ եղած է ամէն կրօ-  
նական բարեկարգութեան դէմ: Աս ըսել է որ մենք մեր  
հայրերուն գիտցածէն աւելի բան մը սորվելու չենք:

Աստուած այլեւայլ դարերու մէջ նոր ճշմարտու-  
թիւններ յայտնած է, երբեմն ալ պարագաներուն համե-  
մատ հին ճշմարտութիւններ կը յայտնէ, որոնք դարերէ

Why not found out before? – Armenian.

ի վեր անյայտ եղած ու մոռցուած են: Այսպէս է Շաբաթը: Աստուծոյ նախախնամութեանը մէջ հիմա եկած է ժամանակը որ այս ճշմարտութիւնը կենդանանայ, և Քրիստոնէութեան մէջ մեծ բարեկարգութիւն մը ըլլայ:

Մարգարէութեան մէջ նախագուշակուած է թէ կաթոլիկ եկեղեցին պիտի փոխէր Աստուծոյ Շաբաթը, և այս փոխութիւնը 1260 տարի պիտի ստիպէր: Անա այս է պատճառը որ Շաբաթը աւելի կանուխ չյայտնուեցաւ: Դանիէլ եօթներորդ գլուխին մէջ չորս տէրութեանց վրայով մարգարէութիւն մը կայ: Ամենուն յայտնի է թէ չորրորդը Հոռովմէ, և պղտիկ եղջիւրը կաթոլիկ եկեղեցին է: 25րդ համարը կ'ըսէ թէ Անիկա պիտի մտածէ ժամանակներ ու օրէնքներ փոխելու, ու անոնք մինչև ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակ անոր ձեռքը պիտի տրուին:» Որո՞ւ ժամանակները ու օրէնքները.— Բարձրելոյն. քանզի մարդոցմէն զրուած օրէնքներ միշտ փոխութեան ենթակայ ըլլալնուն համար, անոնց փոխուիլը զարմանալի բան մը չէ, սակայն եթէ մարդ մը մտածէ Աստուծոյ օրէնքը և ժամանակները փոխելու, սաիկա շատ զարմանալի է: Ուստի այս մարգարէութիւնը անշուշտ Աստուծոյ օրէնքին և Աստուծոյ սուրբ ժամանակին վրայ կը խօսի:

Ան օրէնքին մէջ ժամանակի վերաբերեալ պատուիրան մը կայ: Այս, միայն մէկ պատուիրան մը կայ, այսինքն Տէրոջը Շաբաթը: Միւս պատուիրանք ժամանակի վրայ բան մը չեն ըսեր, բայց սափկա միայն ժամանակին կը վերաբերի: Ժամանակը անբաժանելի կերպով միացած է այս պատուիրանին հետ, այնպէս որ պատուիրանը փոխել ժամանակը փոխել է: Մարգարէութիւնը կ'ըսէ թէ Կաթոլիկ եկեղեցին պիտի մտածէր Աստուծոյ օրէնքները ու ժամանակները փոխելու: Բայց Աստուծոյ

օրէնքը կը վերաբերի միայն եօթնեկի Շաբաթին: Ուրեմն ահա հոս ամենապարզ գուշակութիւն մը կայ թէ Կաթոլիկ եկեղեցին պիտի փոխէր չորրորդ պատուիրանին Շաբաթը:

Կաթոլիկ եկեղեցին փոխած է Տէրոջը Շաբաթը: Այո, և անուրանալի կերպով: Շատ ապացոյցներ կան. 1. Օրէնքը յայսնապէս կ'ըսէ, «Եօթներորդ օրը Տէրոջը քու Աստուծոյ Շաբաթն է:» Ել. ի. 8—11: 2. Նոր կտակարանին մէջ բնաւ յիշուած չէ որ Քրիստոս կամ Առաքեալները Շաբաթը փոխեցին: 3. Սակայն վերջէն կը տեսնանք թէ շաբաթը փոխուած է. քանզի հիմա կաթոլիկներ և Բողոքականներ միաբանութեամբ Մէկշաբթի օրը կը պահեն եօթներորդ օրուան տեղ՝ որ օրէնքը կը պահանջէ, 4. Պատմութիւնը կը վկայէ թէ Պապը փոխեց Շաբաթը: 5. Նոյն իսկ Կաթոլիկները կը խոստովանին թէ իրենք փոխած են: Ականջ տուր հետեւեալ վկայութեան որ կ'օրինակենք կաթոլիկաց Քրիստոնէականէ մը. —

«Հարց. Ուրիշ կերպով կրնաս ապացուցանել թէ եկեղեցին տօներ դնելու իշխանութիւն ունի:

«Պատ. Եթէ այսպիսի իշխանութիւն մը չունենար, չէր կրնար ընել այն բանը որուն մէջ բոլոր արդի կրօնաւորք իրեն հետ կը համաձայնին. այսինքն Շաբաթին տեղ Մէկշաբթին պահելը չէր կրնար դնել. փոփոխութիւն մը որ Աստուծաշունչը չվաւերացներ:» — Տագրրինել Գերեիցիմ, էջ 101:

«Հարց. Ի՞նչպէս կը փաստես թէ եկեղեցին իշխանութիւն ունի տօներ և սուրբ օրեր դնելու:

«Պատ. Ինչպէս որ Բողոքականներ ալ կ'ընդունին, Շաբաթը Մէկշաբթին փոխելովը:» — Էպրիմսկնք ավգրիսլն Տագրրին:

Հետևեալն ալ Տէր էնրայթին մի քարողէն կը քա-  
ղենք, որ խօսեցաւ մեծ բազմութեան մը առջև՝ Միաց-  
եալ Նահանգաց Այօվա նահանգին Հարյէն քաղաքին  
մէջ, Դեկտ. 15, 1889, որ նաև հրատարակուեցաւ  
Հարյէն Ամերիկէն լրագրին մէջ:

«Եղբայրներս, շուրջերնիդ նայեցէ՛ք բազմատեսակ  
աղանդաց եւ յարանուանութեանց վրայ: Ցուցուցէք  
ինձ մին որ պահանջէ կամ ունենայ իշխանութիւն խըզձ-  
մտանքի վրայ պարտաւորիչ օրէնքներ շինելու: Երկրիս  
վրայ միայն մէ՛կ կրօնք մը կայ, այսինքն Կաթոլիկ եկե-  
ղեցին, որ իշխանութիւն ունի օրէնքներ շինելու՝ պար-  
տաւորիչ խղճմանին վրայ, պարտաւորիչ Ասունծոյ առ-  
ջեւ, պարտաւորիչ գեհենի կրակին տանշանաց տակ: Ա-  
ռէ՛ք, զոր օրինակ մեր պահած օրը — Սրբին օրը (Մի-  
աշբաթն): Բողոքական եկեղեցիները ի՞նչ իրաւունք ու-  
նին ան օրը պանելու: Բնա՛ւ, իրաւոնք մը չունին:  
Կ'ըսէ՛ք թէ ասիկա պատուիրանին հնազանդիլ է՝ որ  
կ'ըսէ՛, «Շաբաթ օրը մի տքդ բեր անիկա սուրբ պահելու  
համար:» Բայց Սրեւին օրը (Միաշբաթը) Շաբաթ չէ՝  
թէ՛ պատուիրանին համեմատ և թէ ժամանակի արձա-  
նագրութեան: Ամէն ոք գիտէ թէ Սրբին օրը շաբթուան  
առաջին օրն է, իսկ Երեւակին օրը եօրներորդ օր եւ  
Շաբաթ է, սրբուած իրրե մի օր հանգստեան: Բոլոր  
քաղաքակրթեալ ազգաց մէջ այսպէս ճանչցուած է:  
Բանի անգամ առաջարկած եմ 1,000 տոլար (200 Անդ.  
ոսկի) տալ՝ եթէ մէկը Սուրբ Գիրքին փաս մը թերկ՝ թէ  
մեր պահելու օրը Սրեւին օրն (Միաշբաթն) է, և ոչ  
ոք եկաւ ստակը առնելու: Եթէ այս քաղաքին մէջ կայ  
մէկը որ առ մասին ինձի համար մը ցուցնէ, վաղը իր-  
կուն անիկա հրատարակաւ պիտի ընդունիմ, և չնորհա-  
կալ պիտի ըլլամ: Սուրբ Կարողիկ եկեղեցին եր որ հան-

զբանեան օրը Երեւակի օրէն (Շաբաթէն) Սրեւի օրուան՝  
այսինքն շաբթուան առաջին օրուան փոխեց: Եւ ոչ մի-  
այն սիսկեց ամենը՝ որ Սրեւին օրը (Միաշբաթը) պա-  
հեն, այլ Լաւոդիկիոյ ժողովին մէջ (Յ. Տ. 364) նկովեց  
Շաբարը պահողները, և նզովքի պատժոյն տակ ստիպեց  
ամէնը՝ որ եօթներորդ օրը աշխատին:

«Ամրոջ քաղաքակրթեալ աշխարհը ո՞ր եկեղեցին  
կը հնազանդի: Բողոքականք մնել կ'անուանեն ամէն  
սոսկալի անուններով որ կրնան մտածել, այսինքն նէռ,  
Կարմիր գաղան, Բաբելոն, Ասուն, և նոյն ժամանակին  
կը դաւանին մնծ պատիւ տալ Սուրբ Գրոց, սակայն  
վեեւաբար Միաշաբաթը պահելովնեին Կարողիկ եկեղեցին  
իշխանութիւնը կ'ընդունին: Սուրբ Գիրքը Կ'ըսէ՛, ‘Շա-  
բաթ օրը միտի բեր անիկա սուրբ պահելու համար,’  
բայց Կաթոլիկ եկեղեցին կ'ըսէ՛, ‘Ո՛չ, շաբրուան առա-  
ջին օրը պահի,’ և բոլոր աշխարհ անոր կը խոնարհի  
հնազանդութեամբ:»

Ասկէ պարզ ապացոյց կրնա՞յ ըլլալ: Ուրեմն, Կա-  
թոլիկ եկեղեցին փոխեց Շաբաթը՝ մարգարէութեան  
համեմատ:

Ուրիշ վկայութիւն մըն ալ յառաջ կը բերենք տեսրէ  
մը որ տպագրեալ է յԱրմաշ, ի Վանս Զարխարան Սուրբ  
Աստուածածնի, յամի Տեառն 1871: Այն տեարը կ'ան-  
ուանի «Պատասխանիք Բողոքականաց մէկ քանի առար-  
կութեանց դէմ:» —

«Բանիք թէ բանը [Բողոքականաց հետապըն-  
դումը թէ եկեղեցին իշխանութիւն չունի պահոց օրերը  
և ձեւերը որոշելու] իրենց ընդունած կանոնին ալ հակա-  
ռակ է: Հաստատենք. Յայտնի է որ կիրակի աւուր պահ-  
պանութեան համար բողոքականք շատ խիստ են, և գը-  
րէթէ Հրէից շաբաթանալուն չափ կ'ուղեն ճշդել Մեր

Տերունական օրն ալ, և այս բանը ոչ թէ միայն Քրիստոնեական պարտ կը համարեն, այլ և կարծեմք զրպարտած չեմք ըլլար, եթէ ըսեմք որ կիրակին չարողը Քրիստոնեայ չեն համարեր:

«Կը հարցունեմք ուրեմն, աէրունական աւոր պահպանութիւնը Քրիստոնեական պարտ սեպելու համար ո՞ւ բանած են ուղղակի հրաման մը Նոր Կտակարանին մէջ: Քրիստոնեական Աստուածաբանութեան Գրոց 488 երեսին մէջ իրենք ալ կը խօստովանին որ «Նոր Կտակարանին մէջ այս փոփոխութեան համար (շաբաթը կիրակի փոխուելուն համար) յայտնի և որոշ հրաման մը չկայ:» Մենք ասկէց աւելին կ'ըսեմք. շաբաթ աւուր փոփոխութիւնը տասնաբանեայ օրինաց մէկ հրամանին դէմ և Աստուածաշոնչին հակառակ է. և կիրակի աւուր հանգիստը Նոր Կտակարանին մէջ իւղի գործածութեան չափ անգամ նշանակուած չէ, զոր Բողոքականք ամննեւին ընդունած չեն... Այս է ահաւասիկ մարդոց խելքով և ձեռքով վերանորոգուած հաւատքին յատկութիւնը:»—Տեար երրորդ, էջք 50, 51:

Աս վկայութիւնն ալ կը ցուցնէ թէ Բողոքականք կը պահեն օր մը զոր իրենք հնարած չեն, հապա Լուսաւորչական Եկեղեցին «Մեր Տերունական օրը» անուանեալ դրութիւն մըն է: Հարկ չկայ ըսել թէ Լուսաւորչական Եկեղեցին իրեն կը սեփականէ ան օրը շատ կանուխէն երբ տակաւին միաբան էր Հռովմայ Եկեղեցին հետ Մեծն Կոստանդիանոսի օրերը: Լուսաւորչական Եկեղեցին հաստատուած ատենը միաշաբաթ աւուր պահպանումը արդէն մուտ գտած էր Քրիստոնէութեան մէջ, և Լուսաւորչական Եկեղեցին ինքզինքը նոյնացնելով ան Քրիստոնէութեան հետ, իրեն սեպհականեց ան օրն ալ: Այլիւ բանիւ, Լուսաւորչական Եկեղեցին Հռովմայ Եկե-

ղեցիէն անջատ կիրակի չունէր, այլ անոր հետ միացեալ ունէր զայն, և անոր հետ միացեալ ըլլալով միայն իրաւունք կ'ունենայ զայն անուանել «մեր տէրունական օրը»: Արդ ամենայն համարձակութեամբ կ'ըսենք դարձեալ՝ թէ Կաթոլիկ Եկեղեցին փոխեց շաբաթը:

Մարդարէութեանց մէջ նոյնպէս բացայացակի գուշակուած է թէ Աստուծոյ օրէնքին մէջ բացուած այս խըրամատը ետքի օրերը պիտի նորոգուէր և Շաբաթը պիտի վերականգնէր: Դան. է. 25 համարին մէջ, որ առաջ օրինակեցինք, զրուցելն ետքը թէ Կաթոլիկ Եկեղեցին պիտի հալածէր սուրբերը ու պիտի փոխէր օրէնքներ և ժամանակներ, մարդարէն կ'ըսէ, «Ու անոնք մինչև ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակ անոր ձեռքը պիտի տրուին:» Այս ժամանակամիջոցը 1260 տարի է (Տես Բառարան Սուրբ Գրոց, էջ 585), որ կը վերջանայ յամի Տեառն 1798: Աստուծոյ օրէնքները ու ժամանակները անոր ձեռքը պիտի արուին մինչեւ այս որոշուած ժամանակը: Ասիկա հաւասար է ըսելու թէ այս ժամանակը լրանալուն՝ անոնք իր ձեռքէն պիտի առնուին: Տես, մինչև իսկ հոս զօրաւոր ակնարկութիւն մը կայ թէ 1260 տարիին վախճանը Շաբաթը նորէն պիտի յայնուէր:

Նոյն ժամանակամիջոցը Յայտ. Ժ.Բ. 14 համարին մէջ ալ միշուած է, որուն մէջ վիշապը կը հալածէ կինը, այսինքն Եկեղեցին: Երբոր ժամանակը լրանայ, ահա մնացորդ ժողովուրդ մը կը յայտնուի, որ Աստուծոյ բոլոր պատուիրանները կը պահեն: «Ու վիշապը բարկացաւ կնոջը դէմ և գնաց պատերազմելու անոր ուրիշ զաւակներուն հետ, որոնք Աստուծոյ պատուիրանները կը պահէին, ու Յիսուսի վկայութիւնը ունէին:» Համար 17 Աս պատերազմը կ'ըլլայ 1260 տարիէն ետքը: Հոս ի՞նչ կը տեսնենք: (ա) Ժողովուրդ մը որ կը հալածուի: (բ)

Եկեղեցին ուրիշ զաւակները — վերջին եկեղեցին, կամ անոնք որ ողջ կը մնան Քրիստոսի երկրորդ գալուն։ (գ) Այս ժողովուրդին մասնաւոր յատկութիւնը։ Սնունեցաւ Աստուծոյ պատուիրանները կը պահեն։ Ասիկա անշուշտ կը նշանակէ թէ բոլոր այս պատուիրանները ասկէ առաջ չէր պահուէր, սակայն հիմա ժողովուրդ մը կ'ելլէ ու զանոնք կը պահէ։ Տե՛ս նաև թէ պատուիրանները պահել ասոնց վրայ ատելութիւն և հալածանք կը բերէ։ Ասալ յայտնապէս կը ցուցնէ թէ ասոնք կը պահեն այն պատուիրաններէն մին զոր ուրիշներ չեն պահեր. քանզի մարդ մը չնախատուիր այսինչ բանին համար զոր ուրիշ ամէն ոք կ'ընէ։ Սակայն Շաբաթ պահողները կը հալածուին, ինչպէս որ մարգարէութիւնը գուշակած է։

Հիմա Աստուծոյ օրէնքին վրայ մտածենք։ Մարդիկ կը համաձայնին պահել տասը պատուիրանաց ամէնը բացի Շաբաթէն։ Սակայն թող մարդ մը յայտնուի իրեւ Շաբաթապահ որ չորրորդ պատուիրանը ճիշդ գրուածին համեմատ կը պահէ, այսինքն թէ «Յօթներորդ օրը շաբաթ է», անիկա անմիջապէս տարօրինակ կ'երեւնայ, և իր վըրայ կը բերէ ուրիշներէն ատելութիւն և հալածանք, ինչպէս կը տեսնուի ուր որ Շաբաթին ինդիրը կը ծագի։ Ասիկա է ճիշդ մարգարէութեան գուշակածը, և այսօր մեր աչքերուն առջեւը կը կատարուի Շաբաթի վերականգման մէջ։

Աստուծոյ օրէնքին մէջ ըլլալիք այս բարեկարգութեան նկատմամբ Յայտ. ԺԴ. 9—12 համարներուն մէջ մէկ ուրիշ նշանաւոր մարգարէութիւն մը կայ։ Հոս կը տեսնենք թէ Քրիստոս երկրին հունձքը հնձելու համար գալէն ճիշդ առաջ (14—16 համարներ), իրեն ժողովուրդ մը պատրաստելու համար պատգամ մը պիտի քարոզուի որոնց վրայով ըսուած է թէ «Հոս են անոնք որ կը պա-

հեն Աստուծոյ պատուիրանները և Յիսուսի հաւատքը»։ Համար 12։ «Հոս են անոնք»։ Ուր կամ Ե՞րբ։ Երկրի վրայ՝ Քրիստոս ամպերով երեւնալէն անմիջապէս առաջ։ Հմր. 14։ Ուրեմն ասոնց և Յայտ. ԺԲ. 17 ին վերոյիշեալ մնացորդին անունները նոյն են. Այս ժողովրդեան յատկութիւնն ի՞նչ է։ Աստուծոյ պատուիրանները պահել։ Աս է նորէն ճիշդ ինչ որ ըսուած էր Յայտ. ԺԲ. 17 ին մնացորդին նկատմամբ։ Աստուծոյ մտքին մէջ ասիկայ կարեւոր բան մը ըլլալու է, քանզի կրկին անդամ և շատ մօտ յարաբերութեամբ յիշուած են։ Սա խօսքը թէ «Հոս են անոնք որ կը պահեն Աստուծոյ պատուիրանները»։ Կը ցուցնէ թէ Աստուծոյ պատուիրանները պահել այս ժամանակիս մէջ տարօրինակ սովորութիւնն մէ։

Երդ ետքի օրերը պատուիրաններուն նկատմամբ կերպով մը բարեկարգութիւն մը պիտի ըլլար, անիկա Շաբաթին նկատմամբ ըլլալու է, քանզի միւս ինը պատուիրաններուն մէջ ամէնքը կը համաձայնին։ Սակայն Շաբաթը պղտիկ եղջիւրին աղղեցութեամբը մինչև վերջի օրերը անգիտութեամբ զանց եղած է։ Բայց հիմա, ճիշդ երրորդ հրեշտակին պատգամին ատենը, Յայտ. ԺԴ. 9—12, հաղարաւորներ կը դառնան Շաբաթը պահելու։ Այս շարժումը շատ ընդարձակ և արագընթաց է, և շատ երկիրներ ու լեզուներ կը պարունակէ։ Մարգարէութիւնը իրողութեան դարձեր է։ Դուն անիկա մի մերժեր։ Հոս դարձեալ կը տեսնենք թէ այս ճշմարտութիւնը ինչո՞ւ աւելի կանուխ չյայտնուեցաւ. — անիկա վերջին օրերուն մէջ մարդոց հաւատքը փորձելու համար պահուած էր։

Եղեկիէլի գրքին մէջ մէկ ուրիշ մարգարէութիւն մը կայ ետքի օրերը Շաբաթի վերականգման նկատմամբ։ Նախ, մարգարէն սուալ վարդապետներուն վրայով կը խօսի, որպէս թէ անոնք չեն կատարեր Աստուծոյ գործը

որ պէտք է կատարուի ետքի որերը : Գլ . ԺԳ . 4—11 : «Խրամատութեան տեղուանքը» պէտք է շինուի (Համար 5), սակայն անոնք կը մերժեն : Այս խրամները շինելու են որ Աստուծոյ ժողովուրդը կարող ըլլայ «կայսերու Տէրոջը օրը պատերազմին մէջ :» Համար 5 : Բոլոր Գիրքը մեղի կը սորվեցնեն թէ «Տէրոջը օրը» Քրիստոսի միւս անգամ գալստեան ժամանակն է , որ ան ատեն «Ամանակարող Աստուծոյ ան մեծ օրուանը պատերազմը» պիտի ըլլայ : Յայտ . ԺԶ . 14 : Յայնժամ Աստուծոյ բարկութիւնը պիտի թափուի վերջին եօթը հարուածներով , Յայտ . ԺԶ . որոնց վերջինը երկինքէն խոչոր կարկուտի քարերուն տեղալն է : Համար 21 : Աստուծոյ ժողովուրդը պատրաստուելու են այն ատեն կենալու : Եղէկիել խօսելով ասոր և խոչոր կարկուտի քարերուն նկատմամբ , որ պիտի իյնան , կ'ըսէ թէ այս «Խրամները» շինուելու են , որ յայնժամ Աստուծոյ ժողովուրդը կարող ըլլան կենալ , սակայն այս սուտ վարդապետները շինել չեն ուղեր : Անոնք ունայն տեսիլք և սուտ գուշակութիւն կը տեսնեն , և կ'ըսեն թէ Տէրը ըստ , թէւ Տէրը զանոնք զրկած չէ :» Հմր . 6 : Նաև «Խաղաղութիւն է կ'ըսեն , երբոր խաղաղութիւն չկայ :» Համար 10 : Պողոս առաքեալ կ'ըսէ թէ այս խաղաղութիւն — և — ապահովութիւնը Քրիստոսի միւս անգամ գալէն ճիշդ առաջ պիտի քարոզուի : Ա թես . Ե . 1—4 :

Եղոր այս բաները Եղէկիել մարգարէն զրուցած ժամանակը կը յայտնեն , Անիկա ի'ըսէ , «Մէկը պատ կը շինէ , և ուրիշներ կիրով կը ծեփին զանիկա :» Հմր . 10 : Եղէկիել իի . գլուխին մէջ , ուր մարգարէն նոյն նիւթը դարձեալ կը յիշէ , կը տեսնենք թէ խրամը Աստուծոյ օրէնքին մէջ Շաբաթի պատուիրանին պղծուելովը եղած պատառուած մըն է : Կարդա՛ 25 և 26 համարները , և

պիտի տեսնես թէ Աստուծած նոյն վարդապետներուն վրայ կը զրուցէ , որոնք ունայն տեսիլքներ կը տեսնեն , սուտ գուշակութիւններ կ'ըսեն , և կիրով կը ծեփին ու կ'ըսեն՝ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ , թէեւ Տէրը խօսած չէ : Տէրը անոնցմէ մարդ մը փնտուեց որ պարիսպը շինէ , և «Խրամատին մէջ կայնի ,» սակայն չգտաւ :

Աստուծած 26րդ համարին մէջ օրինակը ձգելով յայտնապէս կ'ըսէ թէ անոնք Տէրոջը օրէնքը և Շաբաթը կ'աւրեն : «Անոր քահանաները իմ օրէնքս աւրեցին :» Մինչև իսկ քահանաները Աստուծոյ օրէնքը կը պղծեն : Ո՞ր պատուիրանը : «Եւ իմ սուրբ բաներս (սուրբ Շաբաթներս) պղծեցին . սուրբը պղծէն (Շաբաթը միւս գործի օրերէն) չորչեցին . և անմաքուրին ու մաքուրին տարբերութիւնը չգիտցուցին , և իրենց աշխերը իմ Շաբաթներէն ծածկեցին :» Ծիշտ նոս է խնդիրը : Անոնք իրենց աչքերը Շաբաթէն ծածկելով Աստուծոյ օրէնքը կը պղծեն , և խրամատը շինելով Տէրոջը օրուան համար ժողովուրդ մը պատրաստելէն կը հրոժարին :

Ես . ԾԷ . ին մէջ նոյն գործը գուշակուած է , այսինքն Շաբաթին վերականգնուելովը խրամատին շինուիլը ու փլածներուն նորոգուիլը : Տէրը նախ կը հրամակէ բարձրաձայն կանչել ու ժողովրդին պատմել իրենց յանցանքը : Համար 1 : Ապա անոնց պարտաւորութիւնները համբելով՝ կ'ըսէ թէ որոնք որ այսպէս կ'ըսեն , «Հին աւերակները պիտի շինեն . առջի գարերուն հիմերը պիտի վերականգնեն , և գուն՝ Փլածներ նորոգոյ , թնակուրեան համար նամբանելու շիտկող պիտի կոչուիս :» Համար 12 : Տէրը նոս կարևոր բարեկարգութեան մը Վրայով կը խօսի : Դարերէ ի վեր երեսէ ձգուած բան մը պիտի վերականգնուի : Այս գործը ընողներ «վիածները» կը նորոգեն ինչպէս Եղէկիելի մէջ : Այս փլածը Շաբաթն

է, ինչու որ ձիշտ հետեւեալ համարը այսպէս կը կարդայ. «թէ որ Շաբաթը, իմ սուրբ օրս, քու ցանկութիւնդ կատարելէն ոտքդ դարձնես :» Մարդիկ շտա դարերէ ի վեր Աստուծոյ Շաբաթը ոտնակոխ ըրեր են: Բայց հիմա եթէ իրենց ոտքերը անկէ դարձնեն, «Փլածներ նորոգող» պիտի կոչուին:

Այս մարգարէութիւնը կը ցուցնէ թէ Շաբաթը շտա դարեր երեսէ ձգուած ու ոտնակոխ մնալէն յետոյ, մեծ բարեկարգութիւն մը ըլլալով՝ սուրբ Շաբաթը նորէն պիտի փառաւորուի: Ահա ասիկա է Շաբաթապահ Գալլստականաց գործը՝ զոր հիմա կաաարելու վրայ են: Դուն ալ մասնակից ըլլալ կ'ուզե՞ս:

Եսա. ԾԶ. ևս կը գուշակէ թէ ետքի օրերը Շաբաթը պիտի վերականգնի: Ասածին համարին մէջ Տէրը կ'ըսէ «Իմ փրկութիւնս գալու մօտ է :» Փրկութիւնը պիտի գայ երբոր Քրիստոս երկինքէն յայտնուի: Երբ. Թ. 28: Ա. Պետ. Ա. 5: Ուրեմն երբօր Քրիստոսի գալուստը մօտենայ, այն ատեն ևերանի այն մարդուն որ... ասիկայ ամուր կը բռնէ, այսինքն Շաբաթը կը պահէ ու զանիկայ չպղծեր:» Եսա. ԾԶ. 2: Ամուր բռնէ՝ չի կրնար ըսուիլ բանի մը համար որ արդէն ամուր կը բռնեն: Բայց հոս Աստուծ երանութիւն կը խոստանայ ամէնուն որ յայնժամ Շաբաթը ամուր կը բռնեն ու զանիկայ կը պահեն:

Ուրեմն բոլոր մարգարէները գուշակած են թէ ետքի օրերը Աստուծոյ օրէնքին ու Անոր սուրբ Շաբաթին նկատմամբ բարեկարգութիւն մը պիտի ըլլար: Ան օրերը հասած ու գործը սկսած է: Բնթերցող, մի՛ մերժեր Աստուծոյ օրէնքը. մի՛ ծածկեր աչքերդ Անոր սուրբ Շաբաթէն:

## ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՕՐԷՆՔ

ԻՆՉՊԵՍ ԵՇՈՎԱՅԻ ԲԵՐԱՆԸ  
ԽՈՍՀԵՑԱԻ

### Ա.

Ես եմ Ենովա քու Աստուածդ, որ քեզ Եղիպատոսի երկրին՝ ծառայութեան տուննեն հանեցի: Ինձէք ի զատ ուրիշ աստուածներ չունենաւ:

### Բ.

Դուն քեզի կուռք չշինես, ոչ ալ վերը երկնից մէջ, կամ վարը երկրի վրայ, կամ երկրի տակի չորերուն մէջ եղող բաներուն մէկ նմանութիւնը. անոնց երկրպատութիւն չընես ու զաննը չպաշտես. ինչու որ ես քու Տէր Աստուածդ նախանձու Աստուած եմ, որ կը հասուցանեմ հայերուն անօրէնութիւնը որդուցը վրայ՝ մինչև անոնց երդորդ ու չորրորդ ազգը որ կ'ատեն զիս. և կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն:

### Գ.

Տէրովը քու Աստուծոյ անոննը պարապ տեղը բերանդ չ'առնես: ինչու որ Տէրը իր անոնք պարապ տեղը բերան առնողը անմեղ պիտի չսեպէ:

### Դ.

Շաբաթ օրը միտքդ բեր՝ զանիկա սուրբ անհեղուհանար: Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործդ ընես. Բայց եօթներորդ օրը Տէրովը քու Աստուծոյ Շաբաթն է. ան օրը գործ մը չզործես, ոչ դուն, ոչ քու որդիզ, ոչ քու ազիշիզ, ոչ քու ծառադ ու այսինդ, ոչ քու անսաւնդ, ոչ ալ դռներուդ մէջ եղած օտարականդ. բանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ. երկինքը ու երկիրը, ծովը ու բոլոր

## ՓՈԽԵԱԼ ՕՐԷՆՔ

ԻՆՉՊԵՍ ՀՈԽՎԱՅԻ ԲԵՐԱՆԸ  
ԵԿԵՂԵՑԻ ԿԸ ՍՈՐՎԵՑԻ

### Ա.

Ես եմ բուՏէր Աստուածդ, ինձմէ ի զատ ուրիշ աստուած չունենաւ:

### Բ.

Աստուծոյ անոննը պարապ տեղը բերանդ չ'առնես: Աստուծությունը անորէնութիւնը որդուցը վրայ՝ մինչև անոնց երդորդ ու չորրորդ ազգը որ կ'ատեն զիս. և կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն:

### Գ.

Աստուծոյ անոննը պարապ տեղը բերանդ չ'առնես:

աննաց մէջ եղածները, և եօթներորդ  
օրը հանգստացաւ, անոր համար Տէրը  
օրինեց Շարամ օրը ու սրբեց զա-  
նիկաւ

**Ա**

Պատուէ քու հայրդ ու մայրդ, որ  
քու օրերդ երկար ըլլան ան երլիբն  
վրայ՝ զոր քու Տէր Աստուածդ կու-  
տայ քեզիւ

**Զ**

Սպանութիւն մի ըներւ

**Է**

Շնութիւն մի ըներւ

**Ը**

Գողութիւն մի ըներւ

**Թ.**

Քու դրացիիդ դէմ սուտ վկայու-  
թիւն մի ըներւ

**Ժ.**

Քու դրացիիդ տանը մի ցանկար.  
քու դրացիիդ կնոջը, կամ անոր ծա-  
ռային, կամ անոր աղախինին, կամ  
անոր եզին, կամ անոր իշուն, և քու  
դրացիիդ ամենեւին մէկ բանին մի  
ցանկար

Եւ. թ. 2—17:

**Դ**

Պատուէ քու հայրդ ու մայրդ

**Ե**

Սպանութիւն մի ըներւ

**Զ**

Շնութիւն մի ըներւ

**Ը**

Գողութիւն մի ըներւ

**Թ.**

Սուտ վկայութիւն մի ըներւ

**Ժ.**

Ուրիշին կնոջը մի ցանկար

**Ժ.**

Ուրիշին ունեցածին մի ցանկար

Քառական գործութեան գործութեան  
էջ 55—67:



Միջազգային Տեսրակի Ընկերութիւնը կը հրատարակէ Քրիստոնէական գիրքեր, Թերթեր և տեսրակներ աւելի քան 50 լիգուներով։ Անզիերէն, Գերմանիերէն, Ֆրանսիերէն, Սպանիերէն, Հոլանտական, Տախմարզական եւ Շուէտական ցուցակները ճնշ են պարունակութեամբ։ Նաև առատ գրութիւնը կան Խուսական, Փոլական, Պոհէմական, Էստոնական, Լէտոնական, Հունգարական, Խուալական Փորթուղիկան, Բուլմանական, Հայիրէն, Տաճկերէն, Յունարէն, Արարտիէն, և լին. լիգուներով Ցուցակներ ծրի կը խրկուին։

Հանդեցէք ուղղել առ.

Կ. Պոլիս, Չափմագնիւր Խօգութ, Մուրատեան Խան, Թիւ 11

*Constantinople, Tchakmakdjilar Yocouchou,  
Mouradian Han, N. II, Turkey.*

**Hamburg**, Grindelberg 15a, Germany.

**Basel**, Nonnenweg 22, Swiss.

**Genf**, Rue da le Synagogue 29, Swiss.

**Watford**, Stanborough Park, Herts, England.

**Christiania**, Akersgaden 74, Norway.

**Stockholm**, Kungsgatan 34, Sweden.

**Helsingfors**, Unionsgatan 4, Finland.

**Riga**, Kl. Newastr. 12, Russia.

**New York City**, 32 Union Square East, U. S. A.

**Washington D. C.**, Takoma Park Station, U. S. A.

**College View**, Nebraska, U. S. A.

**Nashville**, 24. Avenue, North, Tenn., U. S. A.

**Mountain View**, Santa Clara Co., California, U. S. A.

**Ottawa**, 173 Second Ave., Ontario, Canada.

**Tacubaya**, D. F., 1420 Avenida 20, Mexico.

**Port of Spain**, 31 Dundonald Street, Trinidad.

**Sao Bernardo**, Estaçao S. P. R., Sao Paulo, Brasil.

**Buenos Aires**, Florida, F. C. R., Argentinia.

**Santiago**, Casilla 43, Correo 3, Chile.

**Kapstadt**, 56 Roeland Street, South-Africa.

**Lucknow**, Banks Road, India.

**Singapore**, 12 Dhoby Ghaut, East-India.

**Shanghai**, Box 993, U. S. Postal Agency, China.

**Tokio**, 30 Oiwake-cho Hongo-ku, Japan.

**Warburton**, Victoria, Australia.

**Cooranbong**, Avondale, N. S. W., Australia.